Մրցույթի հայտարարություն

«Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝

«Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
   1) ՀՀ քաղաքացիությունը,
   2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
   3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
   4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
   5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են

«Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև ս/թ նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 14:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. նոյեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին, «Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում (Աջափնյակ, Շիրազի 11):

Տեղեկությունների համար դիմել Կարինե Մարգարյանին.

Հեռախոս՝ 098 50 33 44

Էլ. հասցե՝ karinemargaryan67@gmail.com